ՀԱՎԵԼՎԱԾ 16

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ
Խորհրդի 2024 թվականի հունվարի 30 թիվ 1(24) որոշմամբ

Խորհրդի նախագահ՝ Նարեկ Տերյան

_____
ստորագրություն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 4

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 4

ԳԼՈՒԽ 4. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ 6

ԳԼՈՒԽ 5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 7

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ .. 7

ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ 8

ԳԼՈՒԽ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԵՎ ՆՎԱՋԵՑՈՒՄ 10

ԳԼՈՒԽ 9. ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 13

ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14

ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 16

ԳԼՈՒԽ 12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 18

ԳԼՈՒԽ 13. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 18

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջազգային ֆակտորինգի ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) կարգավորում են Առևտրային բանկի և Արտահանողի միջև կնքված միջազգային ֆակտորինգի պայմանագրի շրջանակներում քաղաքական կամ առևտրային ռիսկերի արդյունքում Ներմուծողի կողմից վճարային պարտավորությունը չկատարելու ռիսկի ապահովագրության (այսուհետ՝ Ապահովագրություն) պայմանները:
2. Պայմանները հանդիսանում են միջազգային ֆակտորինգի ապահովագրության պայմանագրի (վկայագրի) (այսուհետ՝ Վկայագիր) անբաժանելի մասը և Վկայագիրը կնքելու միջոցով կողմերը ձեռք են բերում Պայմաններով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:
3. Պայմաններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
   1) **Ապահովագրող՝** «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ,
   2) **Ապահովադիր (ֆակտոր)՝** Առևտրային բանկ կամ վարկային կազմակերպություն, որը դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրի (միջազգային ֆակտորինգի պայմանագիր) համաձայն Արտահանողին հանձնում կամ պարտավորվում է հանձնել դրամական միջոցներ,
   3) **Շահառու՝** Ապահովադիր,
   4) **Արտահանող՝** արտահանում իրականացնող ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր,
   5) **Ներմուծող՝** ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որը Արտահանման պայմանագրի հիման վրա պարտավորվում է Ապահովադրին վճարել մատակարարված ապրանքների կամ մատուցված ծառայությունների կամ կատարած աշխատանքների համար,
   6) **ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր՝** համաձայն ՀՀ հարկային օրենսդրության,
   7) **Պետական Ներմուծող՝** Ներմուծող, որը լիազորված է իրականացնել պետական իշխանություն կամ հանրային կառավարում, որը տվյալ երկրի օրենսդրության համաձայն իրավական տեսանկյունից չի կարող ճանաչվել սնանկ (անվճարունակ), օրինակ՝ Ֆինանսների նախարարություն, Կենտրոնական բանկ, բոլոր մակարդակների տեղական ինքնակառավարման մարմիններ կամ այլ հանրային կառույցներ,
   8) **Առևտրային վարկ՝** Արտահանողի կողմից Ներմուծողին տրամադրված վարկ՝ արտահանված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների (այսուհետ՝ նաև ապրանք/ներ) դիմաց տարաժամկետ վճարելու ձևով,
   9) **Արտահանման պայմանագիր՝** Արտահանողի և Ներմուծողի միջև կնքված իրավական ուժ ունեցող գործող պայմանագիր, որի առարկա է հանդիսանում ապրանքների առք ու վաճառքը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը հետվճարային և/կամ ըստ ժամանակացույցի մարումների պայմաններով,
   10) **Միջազգային ֆակտորինգ՝** ֆինանսավորում դրամական պահանջի զիջման դիմաց, երբ առևտրային բանկը/կամ վարկային կազմակերպությունը Արտահանողին տրամադրում է կամ պարտավորվում է տրամադրել դրամական միջոցներ՝ ի հաշիվ Արտահանողի՝ Ներմուծողից ունեցած պահանջի (Առևտրային վարկ), որը բխում է Արտահանողի կողմից Ներմուծողին ապրանքներ մատակարարելուց, ծառայություններ մատուցելուց և/կամ աշխատանքներ կատարելուց, իսկ Արտահանողը առևտրային բանկին/վարկային կազմակերպությանը զիջում կամ պարտավորվում է զիջել այդ դրամական պահանջը,

11) **Միջազգային ֆակտորինգի պայմանագիր՝** գրավոր համաձայնություն, ինչի համաձայն Ապահովադիրը փոխանցում է դրամական միջոցներ Արտահանողին՝ Ներմուծողի նկատմամբ ունեցած դրամական պահանջի դիմաց,
12) **Արտահանում՝** Արտահանման պայմանագրի համաձայն ապրանքների մատակարարման նպատակով դրանց դուրս բերումը ՀՀ տարածքից և/կամ ծառայությունների մատուցումը և/կամ աշխատանքների կատարումը ՀՀ տարածքից դուրս,
13) **Չհատուցվող գումար՝** Ապահովադրի մասնակցությունը վնասի հատուցմանը՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ,
14) **Սպասման ժամանակահատված՝** Ներմուծողի կողմից **Ապահովադրին** կատարվելիք վճարումը ստանալու Վկայագրով նախատեսված լրացուցիչ ժամանակահատված, որը հաշվարկվում է օրացուցային օրերով ապահովագրական պատահարի օրվան հաջորդող օրվանից և որի ընթացքում Ապահովագրողը ապահովագրական հատուցում վճարելու պարտականություն չի կրում: Սպասման ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 օրից և չի կարող գերազանցել 180 օրը: Սպասման ժամանակահատվածը կիրառվում է միայն Պայմանների 9-րդ կետի 2)-րդ ենթակետով և 10-րդ կետով նախատեսված ռիսկերով պայմանավորված պատահարների դեպքում,
15) **Ապահովագրական գումար՝** Վկայագրի գործողության ընթացքում Միջազգային ֆակտորինգի ապահովագրվող գումար,
16) **Ապահովագրության սահմանաչափ՝** Ապահովագրողի կողմից սահմանված մեկ պահի դրությամբ ստանձնված և ստանձման ենթակա Ապահովագրական գումարների հանրագումարի առավելագույն սահմանաչափ:

4. Պայմաններով Ներմուծողի վերաբերյալ սահմանված դրույթները տարածվում են նաև պետական Ներմուծողի վրա, բացառությամբ Պայմանների 9-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված դրույթի:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

5. Ապահովագրության օբյեկտը Ապահովադրի գույքային շահերն են՝ կապված Ապահովադրի նկատմամբ Միջազգային ֆակտորինգի գծով Ներմուծողի վճարման պարտավորության կատարման հետ: Եթե Ներմուծողը Արտահանման պայմանագրի համաձայն իր պարտավորությունները կատարում է տարաժամկետ բազմակի վճարումների միջոցով, ապա յուրաքանչյուր հերթական վճարում ապահովագրության տեսանկյունից դիտարկվում է որպես առանձին ապահովագրության օբյեկտ:
6. Ապահովագրության ժամկետը սահմանվում է Արտահանման պայմանագրով նախատեսված ժամանակահատվածի տևողությամբ և չի կարող գերազանցել 2 տարին:
7. Ապահովագրությունը չի ծածկում Միջազգային ֆակտորինգի գծով Ներմուծողի կողմից վճարելու պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում, Ապահովադրին վճարման ենթակա տուժանքները (տուգանք, տույժ) կամ տուժանքի բնույթ ունեցող այլ վճարները, ինչպես նաև բաց թողնված օգուտները:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

8. Ապահովագրական պատահար է համարվում Արտահանման պայմանագրով սահմանված ժամկետում Ապահովադրի նկատմամբ Միջազգային ֆակտորինգի գծով Ներմուծողի վճարման պարտավորության մասնակի կամ ամբողջական չկատարումը Ներմուծողի կողմից, եթե վերջինիս կողմից պարտավորությունների կատարման անհնարինությունը (չկատարումը) ուղղակիորեն և բացառապես պայմանավորված է Պայմանների 9-րդ

(առևտրային ռիսկ) կամ 10-րդ (քաղաքական ռիսկ) կետերով սահմանված մեկ կամ մի քանի պատճառներով: Վկայագրով կարող են սահմանվել Պայմանների 9-րդ կամ 10-րդ կետերով սահմանված պատճառների (իրադարձությունների) սահմանափակումներ:

9. Առևտրային ռիսկ առաջացնող պատճառներն են.
   1) Ներմուծողի սնանկության (անվճարունակության) կամ նույն կամ նման իրավական հետևանքներ առաջացնող հանգամանքների ճանաչում Ներմուծողի երկրում նման իրավասություն ունեցող մարմնի կողմից, որը համարժեք է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատարանի վճռով ճանաչված սնանկությանը,
   2) առանց որևէ իրավական հիմքի Միջազգային ֆակտորինգի գծով Ներմուծողի կողմից Ապահովադրին վճարման պարտավորության չկատարում կամ վճարման պարտավորությունից հրաժարում:
10. Քաղաքական ռիսկ առաջացնող պատճառներն են.
   1) վարչական ակտեր կամ օտարերկրյա մարմինների միջամտություններ (գործողություններ), որոնք խոչընդոտում են Ներմուծողի կողմից վճարման պարտավորության կատարումը՝ Ներմուծողի մեղքի կամ սադրանքի բացակայության պարագայում,
   2) Ներմուծողի կողմից Միջազգային ֆակտորինգի գծով վճարման պարտավորության կատարումը խոչընդոտող (սահմանափակող, անհնարին դարձնող) Ապահովագրողի կամ Ապահովադրի պետության կողմից ընդունված ցանկացած իրավական ակտ կամ միջոց՝ կապված այդ պետության և երրորդ երկրների միջև առևտրի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց հետևանքները այլ կերպ ծածկվում են համապատասխան պետության կողմից,
   3) քաղաքական իրադարձությունների արդյունքում վճարումների փոխանցման կամ արժույթի փոխանակման անհնարինություն, ուշացում կամ սահմանափակում, օրենսդրական կամ վարչական միջոցներ կամ լուրջ տնտեսական դժվարություններ Ներմուծողի երկրում կամ այն երկրում, որի միջոցով իրականացվելու է վճարումը (ներառյալ երկրի անվճարունակ ճանաչում, վճարումների մորատորիումի հայտարարում, արժութային ռեժիմի ներդրում, որն արգելում է տեղական արժույթի փոխանակումը, կամ ցանկացած այլ ձևով սահմանափակում է արտասահման վճարումների փոխանցումը կամ արժույթի փոխանակումը), եթե Ներմուծողը դեպոնացրել է դեբիտորական պարտքի գումարին համարժեք գումար տեղական արժույթով և ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ քայլերը գումարի փոխանցման կամ արժույթի փոխանակման համար,
   4) Ներմուծողի երկրում այլ քաղաքական իրադարձություններ, ներառյալ պատերազմ, հեղափոխություն, ահաբեկչական գործողություններ, ապստամբություն, քաղաքացիական պատերազմ, զանգվածային անկարգություններ, ընդհանուր գործադուլներ և այլ քաղաքական իրադարձություններ, որոնք անհնարին են դարձնում Միջազգային ֆակտորինգի գծով վճարման պարտավորությունների կատարումը Ներմուծողի կողմից,
   5) Ներմուծողի երկրում բնական աղետներ, ներառյալ՝ երկրաշարժ, փոթորիկ, հողի սողանք, ջրհեղեղ, հողմ, հողմապտույտ, հրաբխի ժայթքում և այլն,
   6) Պետական Ներմուծողի կողմից Միջազգային ֆակտորինգի գծով պարտավորության չկատարումը:
11. Ներմուծողի սնանկության (անվճարունակության) դեպքում համարվում է, որ ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Պայմանների 9-րդ կետի 1)-ին ենթակետով սահմանված իրադարձության մասին Ապահովադրի կողմից Պայմաններով սահմանված կարգով Ապահովագրողին ծանուցելու պահին՝ անկախ Միջազգային ֆակտորինգի գծով պարտավորության կատարման վերջնաժամկետից:

12. Պայմանների 9-րդ կետի 2)-րդ ենթակետով և 10-րդ կետով սահմանված դեպքերում համարվում է, որ ապահովագրական պատահարը տեղի է ունեցել այդ պատահարի վերաբերյալ Միջազգային ֆակտորինգի գծով պարտավորության կատարման՝ Արտահանման պայմանագրով սահմանված վերջնաժամկետի ավարտի հաջորդ օրը, եթե Միջազգային ֆակտորինգի պայմանագրով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:
13. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է գրավոր ձևով տեղեկացնել Ապահովագրողին՝ ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 30 օրացուցային օրվա ընթացքում:
14. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել նաև իրեն հայտնի ցանկացած իրադարձության (փաստի) մասին, որը կարող է ապագայում հանգեցնել ապահովագրական պատահարի առաջացմանը՝ այդ իրադարձության (փաստի) մասին տեղեկանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
15. Պայմանների 13-րդ և 14-րդ կետերով սահմանված պահանջների գծով սահմանվում են բացառություններ այն դեպքերի համար, երբ Ապահովադիրը հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր սահմանված ժամկետում և կարգով տեղեկացման պարտականության կատարումը: Ապահովադիրը կրում է տեղեկացնելու անհնարինության ապացուցման պարտականությունը: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է Պայմանների 13-րդ կամ 14-րդ կետերով նախատեսված տեղեկությունները նույն կետերով սահմանված կարգով անմիջապես հայտնել Ապահովագրողին:
16. Ապահովագրական պատահար չեն համարվում Ապահովադրի մոտ առաջացած այն վնասները, որոնք ի հայտ են եկել հետևյալ իրադարձությունների հետևանքով՝
    1) Արտահանողի դրամական պահանջի անիրականությունը,
    2) առանց Ապահովագրողի համաձայնության Արտահանման պայմանագրի պայմանների փոփոխությունը և/կամ առանց Ապահովագրողի համաձայնության Միջազգային ֆակտորինգի պայմանագրի պայմանների փոփոխությունը,
    3) Արտահանողի և/կամ Ապահովադրի կողմից համապատասխանաբար Արտահանման պայմանագրի և/կամ Միջազգային ֆակտորինգի պայմանագրի պայմանների այնպիսի խախտումը կամ չկատարումը, որի հետևանքով Ներմուծողի մոտ համաձայն Արտահանման պայմանագրի և/կամ Միջազգային ֆակտորինգի պայմանագրի դրույթների վճարման պարտավորություն չի առաջանում կամ Ներմուծողն ազատվում է այդ պարտավորությունից,
    4) Ապահովադիրը դիտավորությամբ կատարել է այնպիսի գործողություններ, որոնք հանգեցրել են ապահովագրական պատահարի առաջացմանը:

ԳԼՈՒԽ 4. ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

17. Վկայագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե Վկայագրով այլ ժամկետ սահմանված չէ:
18. Ի լրումն ՀՀ օրենսդրությամբ, Վկայագրով կամ Պայմաններով սահմանված դեպքերի, Վկայագրի գործողությունը դադարում է նաև Միջազգային ֆակտորինգի գծով պարտավորության ամբողջական կատարման դեպքում կամ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում ապահովագրական հատուցումը վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու վերաբերյալ Ապահովագրողի կողմից որոշում կայացնելու դեպքում:
19. Վկայագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում.

1) Ապահովադիրը սնանկ է ճանաչվել,
2) Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հավանականությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
3) Ապահովադրի պահանջով, եթե Ապահովադիրը այդ մասին ոչ պակաս, քան 15 աշխատանքային օր առաջ ծանուցել է Ապահովագրողին՝ Պայմանների 20-րդ կետով նախատեսված պահանջների պահպանմամբ,
4) Վկայագրի կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Վկայագրի (Պայմանների) էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում,
5) Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,
6) ՀՀ օրենսդրությամբ կամ Վկայագրով սահմանված այլ դեպքերում:

20. Վկայագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Վկայագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարների վերադարձն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
21. Ապահովադրի կողմից Վկայագրի (Պայմանների) խախտման դեպքում Ապահովագրողի նախաձեռնությամբ Վկայագրի լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները:
22. Վկայագիրը կնքվում է միջազգային ֆակտորինգի պայմանագրով սահմանված՝ դրամական միջոցների հանձնման ժամկետով, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Ներմուծողի կողմից Միջազգային ֆակտորինգի գծով վճարման պարտավորության կատարման երկարաձգման դեպքում, Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ Վկայագրում կարող են կատարվել փոփոխություններ: Այդ դեպքում Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով պարտավոր է վճարել ավելացած ռիսկին համաչափ հավելյալ ապահովագրավճար՝ ելնելով ապահովագրական սակագնից:

ԳԼՈՒԽ 5. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

23. Վկայագրով կիրառվում է ոչ պայմանական Չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:
24. Չհատուցվող գումարը սահմանվում է Վկայագրով՝ վնասի գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ: Ընդ որում, Չհատուցվող գումարը չի կարող 10%-ից պակաս սահմանվել:
25. Չհատուցվող գումարից բխող ռիսկը ծածկող այլ ապահովագրության պայմանագրի կնքում չի կարող իրականացվել:
26. Վկայագրով առանձին ռիսկերի համար կարող են սահմանվել Չհատուցվող գումարի տարբեր չափեր:

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

27. Եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովադիրը պարտավոր է Վկայագրով սահմանված ժամկետում միանվագ վճարել համաձայնեցված ապահովագրավճարը: Ապահովագրավճարի մեծությունը որոշվում է՝ հաշվի առնելով Ապահովագրական գումարի մեծությունը, արտահանման ծավալը, վճարման համաձայնեցված պայմանները, վճարման երաշխավորման մեթոդները, Ներմուծողի բնույթի գնահատումը, Ներմուծողի վարկանիշը, Ներմուծողի երկրի կամ Արտահանման պայմանագրի իրականացման հետ կապված տարածքի/տարածաշրջանի ռիսկի դասակարգումը, Չհատուցվող գումարի մեծությունը և այլն:

28. Եթե Ապահովադիրը Վկայագրով սահմանված ժամկետում չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի առանց վճարման լրացուցիչ ժամկետ սահմանելու միակողմանի լուծելու Վկայագիրը՝ առանց Ապահովադրին այդ մասին ծանուցելու: Ընդ որում Ապահովագրողը կարող է սահմանել նաև տուգանք Վկայագրով սահմանված չափով, որը ենթակա է վճարման Վկայագիրը՝ միակողմանի լուծելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե Վկայագրի գործողությունը դադարել է Վկայագիրը վաղաժամկետ լուծելու կամ այլ հիմքով, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճար պահանջելու միայն մինչև Վկայագրի գործողության դադարումն ընկած ժամանակահատվածի համար:
29. Եթե Վկայագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է Ապահովադրի նախաձեռնությամբ, ապա Ապահովագրողն իրավունք ունի վերադարձման ենթակա չվաստակած ապահովագրավճարի գումարից նվազեցնել ռիսկի գնահատման համար Վկայագրով սահմանվող Ապահովագրողի կողմից կատարված ծախսերը:

ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

30. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը պարտավոր է դիմել Ապահովագրողին Պայմանների 13-րդ կետով նախատեսված կարգով՝ ներկայացնելով ապահովագրական հատուցման վճարման հայտ:
31. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները (այսուհետ՝ փաստաթղթեր).
    1) Ապահովագրողի սահմանած ձևով լրացված ապահովագրական հատուցման հայտ,
    2) ապահովագրական հատուցման հայտը Պայմանների 13-րդ կետով սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում՝ սահմանված ժամկետում դիմելու անհնարինության հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր և/կամ այլ բավարար ապացույցներ,
    3) գործող Վկայագիրը,
    4) Արտահանողի կողմից Ներմուծողին համապատասխան ապրանքների առաքումը և Արտահանողի կողմից Ներմուծողի նկատմամբ համապատասխան պահանջի ձևավորումը հավաստող փաստաթղթեր (նշված փաստաթղթերը կարող են ներառել Ներմուծողին տրամադրված և դեռևս չվճարված հաշիվ-ապրանքագիր, ապրանքների առաքումը հավաստող փաստաթղթեր, արտահանման բեռնամաքսային հայտարարագիր, Ներմուծողի հավաստումն առ այն, որ ստացել է առաքված ապրանքները, չունի դրանց որակի և Արտահանման պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ առարկություններ և ընդունում է իր վճարման պարտականությունը, վճարման վերաբերյալ Ներմուծողին ուղարկված գրավոր հիշեցումներ, նամակագրություն, այլ փաստաթղթեր, որոնք Ապահովադրի կարծիքով կարող են անհրաժեշտ կամ օգտակար լինել հատուցման գործընթացը կազմակերպելու համար, ինչպես նաև Ապահովագրողի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր),
    5) Ներմուծողից մասնակի վճարումներ ստացած լինելու պարագայում համապատասխան վճարումները հավաստող փաստաթղթեր,
    6) ապահովագրական պատահարի տեղի ունենալը, դրա պատճառները հիմնավորող փաստաթղթեր,
    7) Արտահանողի և Ներմուծողի միջև և/կամ Արտահանողի և Ապահովադրի միջև Արտահանման պայմանագրից բխող կամ Միջազգային ֆակտորինգի գծով պարտավորության հիմնավորման վերաբերյալ դատական, արբիտրաժային կամ վեճերի լուծման հետ կապված որոշում կայացնող նման իրավասություն ունեցող այլ սուբյեկտի

վարույթում գտնվող վեճերին վերաբերող փաստաթղթեր և տեղեկություններ, եթե կողմերի միջև առկա են նման վեճեր,

8) այլ փաստաթղթեր և ապացույցներ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հատուցման հայտի կարգավորման համար:

32. Ապահովագրողը Պայմաններով սահմանված ապահովագրական հատուցման հայտը կից փաստաթղթերով ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտության դեպքում Ապահովադրին գրավոր տրամադրում է Ապահովադրի կողմից դեռևս չներկայացված, սակայն ապահովագրական հատուցման վճարման համար ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը: Սույն կետով նախատեսված ցանկում ներառված փաստաթղթերը և տեղեկությունները Ապահովադիրը Ապահովագրողին ներկայացնում է մեկ ամսվա ընթացքում, իսկ Սպասման ժամանակահատված կիրառվելու դեպքում այդ ժամանակահատվածում: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով ողջամիտ ժամկետում կամ սեփական նախաձեռնությամբ Ապահովագրողին տրամադրել սույն կետով նախատեսված ցանկում չընդգրկված այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հատուցման հայտի կարգավորման համար:

33. Ապահովագրական հատուցման հայտը ստանալուց հետո Ապահովագրողը պարտավոր է նախաձեռնել անհրաժեշտ ուսումնասիրություններ՝ ապահովագրական հատուցման հայտն առանց անհարկի ուշացումների կարգավորելու համար: Եթե Վկայագրի կողմերն այլ բան չեն պայմանավորվել, Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցման հայտի կարգավորում՝ ապահովագրական հատուցման հայտի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետից, իսկ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն սահմանված վերջնաժամկետից առավել շուտ ներկայացնելու դեպքում՝ անհրաժեշտ վերջին փաստաթղթի ներկայացումից հետո մեկ ամսվա ընթացքում: Եթե պատահարների դեպքում սահմանված է Սպասման ժամանակահատված, ապա սույն կետով սահմանված մեկամսյա ժամկետը, որը կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է փոփոխվել, հաշվարկվում է Սպասման ժամանակահատվածի վերջին օրվանից սկսած: Ընդ որում, Ապահովագրողը կարող է իր նախաձեռնությամբ միակողմանի կրճատել Սպասման ժամանակահատվածը՝ սահմանելով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման նոր ժամկետներ, սակայն, այնուհանդերձ, կրճատման արդյունքում Սպասման ժամանակահատվածը չի կարող 30 օրից պակաս սահմանվել:

34. Արտահանման պայմանագրի վերաբերյալ արտահանման հետ կապված (մատակարարման ժամկետ, քանակ, կոմպլեկտայնություն, որակ, Ներմուծողի կողմից իրականացված վճարումներ և այլն) վեճերի պարագայում, Սպասման ժամանակահատվածը կասեցվում է մինչև վեճը կարգավորող համապատասխան դատական (արբիտրաժային) ակտի օրինական ուժի մեջ մտնելը կամ Արտահանողի և Ներմուծողի միջև փոխադարձ համաձայնության գալու մասին ակտի ստորագրման պահը:

35. Եթե Ներմուծողի և Արտահանողի միջև առաջանում են Արտահանման պայմանագրից բխող Արտահանողի պարտավորությունների կատարման (ներառյալ մատակարարված ապրանքների ժամկետ, քանակ, կոմպլեկտայնություն, որակ, տեխնիկական անհամապատասխանություն, բիոքիմիական բաղադրության անհամապատասխանություն և այլն) հետ կապված վեճեր, որոնց հետևանքով Ներմուծողը հրաժարվում է ապրանքը ամբողջությամբ կամ մասնակի ընդունելուց կամ վճարում կատարելուց, ապա Ապահովագրողը իրավասու է կասեցնել ապահովագրական հատուցման հայտի քննությունը կամ ապահովագրական հատուցում տրամադրելու մասին որոշում կայացված լինելու դեպքում՝ որոշման կատարումը մինչև վեճի լուծումն հօգուտ Արտահանողի: Ապահովագրողն իր նախաձեռնությամբ կարող է վճարել ապահովագրական հատուցումը Ապահովադրին, եթե առկա են հավաստի փաստեր, որ Ներմուծողի և Արտահանողի միջև

Արտահանման պայմանագրից բխող վեճը լուծվելու է հօգուտ Արտահանողի: Ընդ որում, այն դեպքում, երբ սույն կետով նախատեսված վեճը դատական ակտի հիման վրա կամ այլ կերպ լուծվել է հօգուտ Ներմուծողի, այս դեպքում Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից հետ պահանջել հատուցված գումարը:

36. Ապահովագրական հատուցման հայտի կարգավորման նպատակով Ապահովագրողի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն արտացոլվում են ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցումը մասնակի հատուցելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու վերաբերյալ Ապահովագրողի որոշման մեջ (այսուհետ՝ ապահովագրական հատուցման որոշում):
37. Ապահովագրողն իրավունք ունի ստուգել Ապահովադրի կողմից տրամադրված փաստաթղթերի ճշտությունը ապահովագրական հատուցման հայտի կարգավորման համար:
38. Հատուցման ենթակա գումարը որոշվում է որպես ապահովագրական հատուցման որոշում կայացնելու օրվա դրությամբ Ապահովադրի նկատմամբ Միջազգային ֆակտորինգի գծով չկատարված պարտավորության մեծություն՝ նվազեցված հետևյալ գումարների չափով.
    1) մինչև ապահովագրական հատուցման որոշում կայացնելու օրը Ապահովադրին տվյալ արտահանման կամ ապահովագրության պայմանագրերով վճարված գումարներ կամ կանխավճարներ,
    2) Արտահանողի կողմից Ներմուծողին վճարման ենթակա գումարներ, որոնք ենթակա են փոխադարձ հաշվանցման և որոնց առկայության հիմնավորումն իրականացվում է Արտահանողի կողմից կամ որոնց վերաբերյալ իրավական կամ արբիտրաժային գործընթացների արդյունքում Ներմուծողի օգտին ընդունվել է համապատասխան հարկադիր կատարման ենթակա որոշում, եթե այլ բան սահմանված չէ Վկայագրով,
    3) Վկայագրով նախատեսված Չհատուցվող գումար:
39. Եթե Ապահովադիրը Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնությամբ երկարաձգել է Ներմուծողի կողմից Միջազգային ֆակտորինգի գծով պարտավորության կատարման վերջնաժամկետը, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրը և ապահովագրական հատուցման չափը որոշելիս Ապահովագրողը հիմք է ընդունում սահմանված նոր ժամկետը: Եթե Արտահանման պայմանագրի համաձայն Ապահովադիրը Միջազգային ֆակտորինգի գծով պարտավորության կատարումը դարձնում է վաղաժամկետ վճարման ենթակա, ապա այդ փոփոխությունները հաշվի չեն առնվում Ապահովագրողի պարտավորությունները, ապահովագրական պատահարի օրը և ապահովագրական հատուցման չափը որոշելիս:
40. Ապահովագրական հատուցումը վճարվում է ՀՀ արժույթով: Հաշվարկների ժամանակ օգտագործվում է ապահովագրական հատուցում վճարելու որոշում կայացնելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված համապատասխան արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
41. Ապահովագրական հատուցումը ենթակա է վճարման Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման որոշում կայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԵՎ ՆՎԱԶԵՑՈՒՄ

42. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարման պարտականություն չի առաջանում (ապահովագրական հատուցման բացառություն), եթե

1) հատուցումը վերաբերում է օրենսդրությամբ սահմանված կամ Արտահանման պայմանագրով նախատեսված տույժերին, տուգանքներին կամ այլ վճարներին,
2) ապահովագրական պատահարը առաջացել է որպես միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության ուղղակի կամ անուղղակի հետևանք,
3) ապահովագրական պատահարն առաջացել է որպես հետևանք ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, որոնք կատարվում են հետևյալ երկրներից երկուսի կամ ավելիի միջև՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ֆրանսիայի Հանրապետություն, Միացյալ Թագավորություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն,
4) Պայմաններով, Վկայագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

43. Ապահովագրողը կարող է որոշում ընդունել ապահովագրական հատուցման ամբողջական կամ մասնակի մերժման վերաբերյալ, եթե.
1) ապահովագրական պատահարն առաջացել է Ապահովադրի կամ Արտահանողի դիտավորությամբ կատարված գործողությունների հետևանքով,
2) Վկայագիր կնքելիս Ապահովադրի կամ Արտահանողի կողմից ապահովագրական օբյեկտի, Ներմուծողի կամ Արտահանման պայմանագրի այլ կողմի և/կամ արտահանման գործարքի վերաբերյալ ներկայացվել է կեղծ տեղեկություններ կամ թաքցվել է ապահովագրական ռիսկը գնահատելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ (այդ թվում՝ չի բացահայտվել տեղեկություններ վկայագրի կնքման պահին Ապահովադրի և/կամ Արտահանողի կողմից Ներմուծողի նկատմամբ գոյություն ունեցող դեբիտորական պարտքի կամ Ներմուծողի այլ ժամկետանց պարտավորությունների (ներառյալ նախկինում առկա և դուրս գրված պարտավորությունների) վերաբերյալ և այլն),
3) Ապահովադիրը հատուցում է ստացել երրորդ անձից, որը պատասխանատու է պատճառված վնասի համար, այն չափով, որքանով հատուցում ստացվել է վնաս պատճառած անձից,
4) առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության Ներմուծողի պարտքը փոխանցվել է երրորդ անձի,
5) վնասները Արտահանողի կողմից Արտահանման պայմանագրի պայմանների չպահպանման կամ ոչ պատշաճ կատարման հետևանք են,
6) Առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության Վկայագրի գործողության ընթացքում Արտահանողը և Ներմուծողը դարձել են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով փոխկապակցված անձինք կամ այդպիսին են եղել Վկայագրի կնքման պահին և այդ փաստը թաքցրել են Ապահովագրողից,
7) Արտահանողի և Ներմուծողի միջև առկա է եղել Արտահանման պայմանագրից բխող վեճ, որը լուծվել է հօգուտ Ներմուծողի:
8) Արտահանման պայմանագրի հետ կապված Ապահովադրի կամ Արտահանողի պահանջը մերժվել է լուծարային կառավարչի (անվճարունակության ադմինիստրատորի կամ նման գործառույթներ իրականացնող անձի) կողմից և հետագայում չի հաստատվել վերջինիս կողմից, կամ եթե մերժված պահանջը չի հաստատվել դատարանի որոշմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ պահանջի մերժումը իրականացվել է լուծարային կառավարչի (անվճարունակության ադմինիստրարտորի կամ նման գործառույթներ իրականացնող անձի) կամ դատարանի ակնհայտ խտրականության արդյունքում,
9) ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելիս Ապահովադիրը դիտավորյալ ներկայացրել է սխալ կամ էականորեն խեղաթյուրված

տեղեկատվություն ապահովագրական վնասի կամ պատահարի վերաբերյալ կամ թաքցրել է էական տեղեկատվություն վնասի կամ պատահարի վերաբերյալ,

10) Ապահովադրի կողմից խախտվել են Պայմանների 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված ժամկետները և չի հիմնավորվել Պայմանների 15-րդ կետում նշված հանգամանքների առկայությունը,
11) Ապահովադիրը Պայմանների 32-րդ կետի համաձայն փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները և չի հիմնավորել, որ սահմանված ժամկետում փաստաթղթերի չներկայացումը պայմանավորված է եղել դրանց ներկայացման անհնարինությամբ (ներառյալ՝ դատական գործընթացներով) և փաստաթղթերը և տեղեկությունները չեն ներկայացվել անհնարինությունը պայմանավորող հանգամանքների վերացումից հետո՝ մեկամսյա ժամկետում,
12) Ապահովադրի կողմից ապահովագրական հատուցման համար Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, ինչպես նաև, եթե այդ փաստաթղթերը կեղծ են կամ թերի,
13) Ներմուծողի կողմից վճարման պարտավորությունը չկատարելը պայմանավորված է Արտահանողի կողմից Արտահանման պայմանագրով սահմանված իր պարտականությունների չկատարմամբ կամ էական բացթողումներով կատարմամբ, եթե նման դեպքում չվճարման իրավունքը հիմնավորվել է Ներմուծողի կողմից համաձայն Արտահանման պայմանագրի դրույթների և/կամ դատարանի որոշմամբ:
14) Ապահովադիրը մերժում է Ապահովագրողի պահանջով Ապահովագրողի հետ կնքել պահանջի իրավունքի զիջման պայմանագիր, որով կսահմանվի Ներմուծողի վճարման պարտավորությունը Ապահովագրողին փոխանցելու հանգամանքը,
15) Ապահովադիրը մերժում է Ապահովագրողի պահանջով Ապահովագրողի հետ կնքել պայմանագիր, որով Ապահովադիրը իրավական միջոցներով և համապատասխան ողջամիտ ծախսերի փոխհատուցման դիմաց կօժանդակի Ապահովագրողին Ներմուծողի կողմից վճարման պարտավորությունը կատարելու հարցում,
16) Պայմաններով, Վկայագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

44. Ապահովագրողն իրավունք ունի համապատասխան չափով (հաշվի առնելով պատահարի հանգամանքները, դրանում Ապահովադրի մեղավորության աստիճանը և այլ չափանիշներ) նվազեցնել ապահովագրական հատուցման գումարը, եթե.
    1) Ներմուծողի կողմից վճարման պարտավորության չկատարումը ուղղակի կամ անուղղակի պայմանավորված է Արտահանման պայմանագրի կամ դրա հետ կապված այլ փաստաթղթերի որևէ դրույթի կիրառմամբ (բացառությամբ համապատասխան միջազգային կոնվենցիաների կամ պրակտիկայի դեպքերի), որոնք սահմանափակում են Ապահովադրի կամ Արտահանողի իրավունքները կամ դրանց կիրառման և վերահսկողության հնարավորությունները: Ընդ որում, Վկայագրի կնքման ընթացքում Արտահանման պայմանագիրը կամ դրա հետ կապված այլ փաստաթղթերն Ապահովագրողի կողմից դիտարկված լինելը չի կարող սահմանափակել սույն կետով սահմանված հիմքով Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցման նվազեցման իրավունքը,
    2) Ներմուծողի կողմից վճարման պարտավորության չկատարումը ուղղակի կամ անուղղակի պայմանավորված է Արտահանման պայմանագրի կնքումից հետո Ապահովադրի և Ներմուծողի միջև ձեռք բերված հետագա համաձայնությամբ, որը խոչընդոտում, ուշացնում կամ սահմանափակում է Ներմուծողի վճարման պարտավորությունը,
    3) եթե Ապահովադիրը խախտել է Ապահովագրողի հանդեպ իր պարտավորությունները՝ սահմանված Վկայագրով, Պայմաններով կամ այլ իրավական ակտերով, և այդ

խախտումը էական ազդեցություն է ունեցել ապահովագրական պատահարի տեղի ունենալու, վերջինիս ընթացքի կամ հետևանքների ավելացման կամ հատուցման չափի որոշման վրա,

4) Պայմաններով, Վկայագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

45. Ապահովագրողն ապահովագրական հատուցման վճարման պարտականություն չի կրում այն դեպքերում, երբ Ներմուծողը վճարման պարտավորությունն ամբողջությամբ կատարում է Վկայագրով սահմանված Սպասման ժամանակահատվածում կամ մինչև ապահովագրական հատուցման տրամադրման օրը:

ԳԼՈՒԽ 9. ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

46. Ապահովագրական հատուցման ամբողջական կամ մասնակի վճարման հետ միաժամանակ Ապահովագրողն իրավասու է պահանջել Ապահովադրից Ներմուծողի նկատմամբ իր պահանջի իրավունքը հատուցված գումարի չափով փոխանցել Ապահովագրողին (սուբրոգացիա): Ապահովագրողի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին փոխանցել իր պահանջի իրավունքները, ներառյալ՝ տրված երաշխիքների կամ այլ ապահովման միջոցների հետ կապված իրավունքները՝ անհրաժեշտության դեպքում կնքելով նաև համապատասխան պայմանագիր:
47. Ապահովադիրը պարտավոր է առանց անհիմն ձգձգումների Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, ինչպես նաև ապահովել անհրաժեշտ համագործակցություն Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված իրավունքների իրականացման համար:
48. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի և Ներմուծողի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:
49. Սուբրոգացիայի արդյունքում Ապահովագրողին փոխանցված իրավունքների իրականացման նպատակով Ապահովագրողը կարող է Ապահովադրին կամ Ապահովադրի կողմից լիազորված այլ անձի լիազորել Ներմուծողից (վճարումը երաշխավորած այլ անձանցից) վճարման ստացումը: Նշված դեպքում Ապահովագրողը փոխհատուցում է Ապահովադրին կամ Ապահովադրի կողմից լիազորված այլ անձին՝ Ներմուծողից վճարման ստացման հետ կապված նպատակային և ողջամիտ ծախսերի համար:
50. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումից հետո Ներմուծողի կամ երրորդ անձի կողմից Միջազգային ֆակտորինգի գծով կատարված վճարումները պատկանում են Ապահովագրողին, և Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել այդ վճարումների մասին, ինչպես նաև Ապահովագրողին փոխանցել այդ վճարումները՝ ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
51. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար Ներմուծողի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել համապատասխան չափով վճարված հատուցման գումարը:
52. Այն դեպքում, երբ Ապահովադրի հետ կնքվում է պայմանագիր, որով Ապահովադիրը իրավական միջոցներով և համապատասխան ողջամիտ ծախսերի փոխհատուցման դիմաց պետք է օժանդակի Ապահովագրողին Ներմուծողի վճարման պարտավորության կատարումն ապահովելու համար, ապա Ապահովագրողի համաձայնությամբ տվյալ

պարտավորությունից բխող Ապահովադրի պահանջի իրավունքի փոխանցումը Ապահովագրողին կարող է հետաձգվել, իսկ դրա հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման սույն կետով նախատեսված օժանդակության մասին պայմանագրով:

ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

53. Ապահովադիրն իրավունք ունի.
    1) Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ստանալ ապահովագրական հատուցում, պահանջել Ապահովագրողից հատուցում վճարելու հետ կապված որոշում ընդունելիս իրականացնել պատշաճ ուսումնասիրություն, ուսումնասիրության արդյունքները արտացոլել համապատասխան որոշման մեջ և այդ որոշման մասին պատշաճ կարգով ծանուցել Ապահովադրին:
54. Ապահովադիրը պարտավոր է.
    1) Վկայագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարել ապահովագրավճարը,
    2) Ապահովագրողի պահանջով ցանկացած պահի ներկայացնել Պայմաններով նախատեսված փաստաթղթերը:
    3) Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնել այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահարի առաջացման և վնասի ծավալների գնահատման հարցում,
    4) Միջազգային ֆակտորինգի պայմանագրի բանակցման գործընթացում գործել պատշաճորեն և զգուշորեն՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային կոնվենցիաները և պրակտիկան, այդ թվում՝ ուշադրություն դարձնել Արտահանման պայմանագրի կողմերի հստակ և օրինական նույնականացմանը, համաձայնեցնել և Միջազգային ֆակտորինգի պայմանագրում նախատեսել դրույթ՝ այդ պայմանագրով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվող օրենսդրության վերաբերյալ, վեճերի լուծման կարգի վերաբերյալ, ինչպես նաև Ներմուծողի վճարային պարտավորությանը և դրա հետ կապված ռիսկերին վերաբերվել այնպես, ինչպես եթե դրանք ապահովագրված չլինեին,
    5) գործել Արտահանման պայմանագրի և Ներմուծողի երկրի կամ այն երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան, որի միջոցով իրականացվելու է վճարումը,
    6) խուսափել միջազգային ֆակտորինգի պայմանագրում կամ դրա հետ կապված փաստաթղթերում այնպիսի դրույթներ սահմանելուց, որոնք տարբերվում են համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պրակտիկայից և սահմանափակում են Ապահովադրի իրավունքները կամ դրանց իրագործման հնարավորությունները,
    7) պատշաճ կարգով պաշտպանել սեփական իրավունքները Ներմուծողի, Ներմուծողի երաշխավորների և երրորդ անձանց նկատմամբ, ապահովել, որ Արտահանման պայմանագիրը կամ Ներմուծողի կամ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերը չսահմանափակեն Ապահովագրողի խելամիտ պահանջները և չբարդացնեն դրանց իրագործումը,
    8) առանց ուշացման տեղեկացնել Ապահովագրողին և մերժել միջազգային ֆակտորինգի պայմանագրի կիրառումը, եթե Ապահովադրին հայտնի են դարձել այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են հանգեցնել ապահովագրական պատահարի առաջացմանը կամ վնասի մեծացմանը կամ կարող են ազդել Վկայագրից բխող Ապահովագրողի պարտավորությունների վրա,

9) տեղեկացնել Ապահովագրողին միաժամանակ այլ ապահովագրական ընկերության հետ կնքված նույն կամ նման ռիսկերը ծածկող ապահովագրության պայմանագրի վերաբերյալ՝ կնքումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում,
10) մասնակցել վնասի հատուցմանը Չհատուցվող գումարի չափով և չկնքել այլ ապահովագրության պայմանագիր Չհատուցվող գումարի համար,
11) Վճարման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հիշեցում ուղարկել Ներմուծողին և Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում Ապահովագրողին տեղեկացնել Ներմուծողի կողմից չվճարման պարտավորության մասին,
12) անհատապես կամ համաձայնության դեպքում Ապահովագրողի հետ ձեռնարկել բոլոր խելամիտ քայլերը՝ ուղղված ապահովագրական պատահարի առաջացման և կորուստի չափի ավելացման կանխարգելմանը, մասնավորապես ներկայացնել իր պահանջները ժամանակին և պատշաճ կարգով, հետևողական հսկողություն իրականացնել չվճարված պարտավորությունների նկատմամբ: Ապահովադիրը պատասխանատու է դատարան կամ այլ համապատասխան մարմին պահանջի ուշ ներկայացման արդյունքում Ներմուծողի վճարման պարտավորությունների հետ կապված դժվարությունների համար,
13) համագործակցել Ապահովագրողի հետ ապահովագրական պատահարի առաջացմանն ու հետևանքների նվազեցմանն ուղղված քայլերի ձեռնարկման հարցում, Ներմուծողի կամ երրորդ անձի նկատմամբ քայլեր ձեռնարկել միայն Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության դեպքում: Եթե Ապահովագրողը առաջարկվող գործընթացի վերաբերյալ կարծիք չի հայտնում Ապահովադրից համապատասխան դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կամ Ապահովադրին կարծիք տալու այլ ժամկետի վերաբերյալ համաձայնության չի գալիս Ապահովադրի հետ, ապա համարվում է, որ Ապահովագրողը տվել է իր համաձայնությունը առաջարկվող գործընթացի վերաբերյալ:
14) Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրը խոչընդոտել է Ապահովագրողին իրականացնել իրեն փոխանցված իրավունքները, կամ Ապահովադիրը հնարավորություն չի տվել Ապահովագրողին պատշաճորեն իրականացնել այդ իրավունքները կամ եթե Ապահովադիրը բարդացրել է Ապահովագրողի կողմից այդ իրավունքների իրագործման գործընթացը կամ եթե Ապահովագրողի կողմից մերժվելուց հետո Միջազգային ֆակտորինգի գծով վճարման պարտավորությունը Ապահովադրի կողմից փոխանցվել է երրորդ անձանց, Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցումը, եթե այն վճարվել է ոչ ամբողջական կամ ոչ արժանահավատ տեղեկատվության հիման վրա կամ սխալ որոշման արդյունքում կամ եթե ի հայտ են եկել Պայմանների ԳԼՈՒԽ 8-ով սահմանված փաստերը,
15) սնանկության (անվճարունակության) գործընթացների (և/կամ նմանատիպ գործընթացներ, որոնք Ներմուծողի երկրի օրենսդրությամբ սահմանված են որպես նույն կամ նմանատիպ հետևանքներ առաջացնող) դեպքում Ներմուծողի վճարման պարտավորությունը պատշաճ կարգով և ժամանակին գրանցել անվճարունակության գործընթացներում (համապատասխան հերթում),
16) Վկայագրի գործողության ժամանակահատվածում 3 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի դարձած էական փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Էական են համարվում Միջազգային ֆակտորինգի պայմանագրում, Արտահանման պայմանագրում կատարված փոփոխությունները, Ներմուծողի

ֆինանսական վիճակի փոփոխությունը, այլ տեղեկատվություն, որը Ապահովադիրը հայտնում է Ապահովագրողին Վկայագրի կնքման համար:
Սույն ենթակետում շարադրված պարտավորությունների չկատարման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Վկայագրի լուծում և հասցված վնասների հատուցում,

17) Ապահովադրի նախատեսվող լուծարման կամ վերակազմավորման մասին Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին հայտնել 30 (երեսուն) օրացուցային օր առաջ,
18) Վկայագրի կնքման համար Ապահովագրողին ներկայացնել Պայմաններում սահմանված փաստաթղթերը ապահովագրական ռիսկի գնահատման համար և Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական ռիսկի հավանականության և ծավալների սահմանման հարցում, եթե այդ հանգամանքները հայտնի չեն կամ չեն կարող հայտնի լինել Ապահովագրողին,
19) ստեղծված իրավիճակում ձեռնարկել բոլոր խելամիտ և հասանելի միջոցները փոքրացնելու համար հնարավոր վնասները, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում դիմել համապատասխան մարմիններին: Ապահովադիրը նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի Ապահովագրողի ցուցումներին:
20) Ապահովագրողի հետ համագործակցել ապահովագրական պատահարի հանգամանքների բացահայտման հարցում,
21) Ապահովագրողի համար հնարավորություն ստեղծել ապահովագրական պատահարի պատճառների, հանգամանքների ուսումնասիրության համար, ինչպես նաև ապահովագրական վնասների ծավալների գնահատման վերաբերյալ,
22) պահանջների ներկայացումից 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում վերադարձնել ապահովագրական հատուցման գումարներն այն դեպքում, երբ Ապահովադիրը հրաժարվել է իր պահանջի իրավունքից կամ այդպիսի իրավունքի իրականացումը դարձել է անհնար Ապահովադրի մեղքով,
23) մինչև ապահովագրական հատուցման տրամադրումը Ապահովագրողի պահանջով Ապահովագրողի հետ կնքել պահանջի իրավունքի զիջման պայմանագիր:

55. Ապահովադիրը չի կարող առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության.
    1) համաձայնել Ներմուծողի հետ փոփոխել վճարումների ժամկետները կամ գումարները,
    2) Միջազգային ֆակտորինգի գծով իր իրավունքները գրավադրել կամ դրա օգտագործումը այլ կերպ սահմանափակել,
    3) Միջազգային ֆակտորինգի գծով իր իրավունքները փոխանցել երրորդ անձի:
56. Ելնելով կոնկրետ գործարքի անհրաժեշտությունից՝ Վկայագրով կարող են սահմանվել սույն պայմաններից բացառություններ և/կամ նախատեսվել լրացուցիչ պայմաններ:

ԳԼՈՒԽ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

57. Ապահովագրողը պարտավոր է.
    1) իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ ապահովագրական հատուցում վճարելու հետ կապված իր պարտավորության չափը որոշելու համար,
    2) ուսումնասիրության արդյունքները արտացոլել ապահովագրական հատուցում վճարելու որոշման մեջ և վերջինիս վերաբերյալ պատշաճ կարգով ծանուցել Ապահովադրին,
    3) ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ապահովագրական հատուցումը,
    4) իրեն տրամադրված և վստահված փաստաթղթերի նկատմամբ ցուցաբերել պատշաճ հոգատարություն:

58. Ապահովագրողն իրավունք ունի.

1) պահանջել ապահովագրավճարի վճարում Վկայագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար,
2) պահանջել Ապահովադրից ներկայացնել միջազգային ֆակտորինգի պայմանագիրը, ներառյալ պայմանագրի փոփոխությունները և լրացումները, պայմանագրի հետ կապված այլ փաստաթղթերը: Ընդ որում, դրանք պահանջելով Ապահովագրողը պատասխանատու չի դառնում այդ պայմանագրի և փաստաթղթերի բովանդակության և ձևի համար,
3) Վկայագրի կնքման պահին ստուգել ռիսկի չափը, որը պատրաստվում է ապահովագրել, ինչպես նաև մերժել Վկայագրի կնքումը, եթե այդ ռիսկի ստանձնումը կհանգեցնի տվյալ Ներմուծողի նկատմամբ Ապահովագրողի կողմից սահմանված Ապահովագրական սահմանաչափի գերազանցմանը, ավելացնել ապահովագրավճարը կամ Չհատուցվող գումարի չափը, եթե Արտահանման պայմանագիրը և դրա հետ կապված փաստաթղթերը փոփոխության են ենթարկվել առանց Ապահովագրողի նախնական համաձայնության,
4) ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունն ու ճշգրտությունը՝ չխախտելով ապահովագրական, բանկային, ծառայողական, առևտրային կամ այլ գաղտնիքների հետ կապված օրենսդրական պահանջները,
5) Ապահովադրից պահանջել ներկայացնել փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի մակարդակի որոշման և Վկայագրի կնքման վերաբերյալ որոշման կայացման համար,
6) ստուգել Ապահովադրի ներկայացրած տեղեկատվության արժանահավատությունը, ինչպես նաև Վկայագրի կնքման դիմումում ներկայացված տվյալները,
7) ստուգել Ներմուծողի ներկայացրած տեղեկատվության արժանահավատությունը, ինչպես նաև Վկայագրի կնքման դիմումում ներկայացված տվյալները,
8) համապատասխան մարմիններ հարցումներ ուղարկել Ապահովագրական պատահարի պատճառների ու հանգամանքների բացահայտման վերաբերյալ, ապահովագրական վնասի ծավալների որոշման վերաբերյալ,
9) սահմանել Ապահովագրության սահմանաչափի սահմանման, փոփոխման և չեղարկման կարգը,
10) Ներմուծողի ֆինանսական վիճակի կամ գործարար դիրքի վատթարացման, Ներմուծողի երկրի ռիսկի փոփոխության, քաղաքական և/կամ մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում, Արտահանողի կողմից սահմանաչափը տրամադրման պահից ողջամիտ ժամկետում չօգտագործելու դեպքում իր նախաձեռնությամբ նվազեցնել Ապահովագրության սահմանաչափը,
11) իր նախաձեռնությամբ կրճատել Սպասման ժամանակահատվածը,
12) պահանջել Ապահովադրից վերադարձնել տրամադրված ապահովագրական հատուցումը, եթե այդ հատուցումը տրամադրվել է այնպիսի հանգամանքներում, որի դեպքում Ապահովագրողը իրավունք ուներ չտրամադրելու ապահովագրական հատուցում և այդ հանգամանքները Ապահովագրողից անկախ պատճառներով Ապահովագրողին հայտնի են դարձել ապահովագրական հատուցումը տրամադրելուց հետո,
13) պահանջել Ապահովադրից կնքել Պայմանների 54-րդ կետի 23)-րդ կետով նախատեսված պայմանագիրը,
14) իրականացնել Պայմաններով, Վկայագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

ԳԼՈՒԽ 12.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

59. Ապահովագրողի և Ապահովադրի միջև փոխադարձ պարտավորությունների վճարումն իրականացվում է ՀՀ արժույթով: Ապահովագրավճարի չափի որոշման նպատակով արժույթի փոխարկումն իրականացվում է Վկայագրով սահմանված փոխարժեքով, իսկ Վկայագրով փոխարժեք սահմանված չլինելու դեպքում կիրառվում է Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը:
60. Ապահովագրավճարի, ինչպես նաև Ապահովագրողի նկատմամբ այլ պարտավորությունների վճարումն իրականացվում է Ապահովագրողի կողմից թողարկված համապատասխան հաշիվ-ապրանքագրի հիման վրա, եթե Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
61. Վկայագրի և Պայմանների դրույթների միջև հակասությունների առաջացման դեպքում գործում են Վկայագրի դրույթները:
62. Վկայագրով և Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ապահովագրության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ:
63. Եթե Պայմանների կամ Վկայագրի որոշ դրույթները դառնում են անգործադրելի կամ անվավեր, ապա դա չի հանգեցնում մնացած դրույթների անգործադրելիությանը կամ անվավերությանը:
64. Վկայագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:
65. Պայմաններում կիրառվող բառերի, եզրույթների, հասկացությունների, արտահայտությունների հետ Ներմուծողի երկրի օրենսդրությամբ կիրառվող բառերի, եզրույթների, հասկացությունների, արտահայտությունների անհամապատասխանության դեպքում դրանք մեկնաբանվում են բովանդակային առումով, իսկ Պայմաններում կիրառվող բառերի, եզրույթների, հասկացությունների, արտահայտությունների մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրանց իմաստը:

ԳԼՈՒԽ 13. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

66. Պայմաններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի փետրվարի 1-ին: